

գալրաց խումբը «Հրաշափառ» շարականը կը հնչէ մեծ խանդավառութեամբ. Ծիրանաւոր Աղաճանեանի կը արուի շուրջառ:

Յաւարտ պատարագին, Գերշ. Զգօն Սրբազան, մեկնելով օրուան մեծ խորհուրդը, աղբերու եւ յարութեան գաղափարներով օծուն քարոզ մը կու տայ, սիրոյ ուրախ ողջոյն ուղղելով Վսեմ. Ծիրանաւոր Աղաճանեանի, այս բացառիկ պատիւին համար:

Քարոզէն ետք կը վառէ ուխտական կանթեղ-մոմը, ի յիշատակ բիւրաւոր նահատակներու. եւ բոլոր ներկաները այդ լոյսէն կը վառեն իրենց մոմիկները: Այդ խորհրդաւոր պահուն – շատեր կու լան յուզումէն – խօսք կ'առնէ Վսեմ. Ծիր. Աղաճանեան զրուստելով հայուն հաւատքը եւ սէրը Սուրբ Եկեղեցւոյ հանդէպ, որ Վարդանանց օրերէն ոսկեղէն շղթայ մը կը կազմէ մինչեւ ներկայ ժամանակները: Յիշելով շնորհարան Եղիշէի մէկ խօսքը թէ՛ «զուգութիւն է մայր բարեաց», հրաւեր կը կարգայ սիրով ու համերաշխ ողբով արժանաւոր յաջորդներն ըլլալու մեր լուսածնունդ նախնիքներուն, եւ մեր ձեռքերուն մէջ վառուած մոմերը ըլլան խորհրդանշանի մը անշէջ հաւատքին եւ փարուն մին Սուրբ Աւետարանին:

Հոգեհանգստեան պահն էր, երբ Գերշ. Զգօն Սրբազան իր գաւազանն ու ձեռքի խաչը կը յանձնէ Ծիր. Աղաճանեանի, աւոր տալով արարողութեան նախագահութիւնը:

Գեղեցիկ արեւ մը, ոսկի արեւը մեր լեռներուն զուրսը կը տաքցնէր ամէնքս. բայց արդէն տաք էին մեր սրտերը: Սիրոյ համբոյրը հողիններուն մէջ նոր դարուն մը կ'աւետէր, նահատակներու արիւնով ուռնացող:

Տուումոյի փառապանծ ոգեկոչումը

Կէսօրէ ետք ժամը հորսն է. ծայրէ ծայր լեցուն է Միլանի Մայր Եկեղեցին: Մասնաւոր գահի վրայ բազմած է տեղւոյն Արքեպիսկոպոսը Ծիրանաւոր Քրիստոսոս: Իր շուրջ Միլանի խաղաղ բոլոր կղերական

գասը: Հաւանարար Խաղաղ բոլոր Հայերը, քիչ բացառութեամբ: Հուսկ... բազմազար խաղաղներ. փորձառու եկեղեցաւար՝ վարդապետ մը ըսաւ թէ շուրջ 50.000-ի կրնար հասնիլ մասնակցողներու թիւը:


Եկեղեցւոյն կղերներ պատարագիչ Ծիրանաւորը իր շուրջ ունէր ութը Միլիթարեան Վարդապետներ, որոնք Ս. Ղազարէն փութացած էին իրենց լաւագոյն ըզզեւատուորումներով պանծացնելու հայ ծէսը: Յոլացող լոյսերու տակ կը պլպլար ամէն ինչ: Դպրաց գասը կազմուած էր Հոռմի Լեւոնեան Վարժարանի Ժառանգաւորներէն, որոնց միացան քանի մը մեներդիւններ Միլանոյէն:

Ներկայ էին Միլանի Կուսակալը, փոխ Բաղաքապետը, Ոստիկանապետը, ղինուորական ու քաղաքական այլ ներկայացուցիչներ, հիւպատոսներ, բոլորն ալ մասնաւոր հրաւերով Ծիր. Քրիստոսոսի եւ տեղւոյն հայ գաղութին:

Արարողութեան կը մասնակցէին Վենետիկի Միլիթարեանց Արբաճայրը Գրպծ. Հմայեակ Վարդ. Կէտիկեան, Հոռմէն՝ Գրպծ. Յակոբ Ծ. Վ. Կիրակոսեան. ասոնց կողքին կանգնած էր Գերշ. Զգօն Սրբազան, Առաջնորդ Միլանոյի Հայոց: Մասնաւոր տեղ գրաւած էին Մուրատ-Ռափայէլեան վարժարանի ամբողջ աշակերտութիւնը, իրենց Տեսչական Մարմնին հետ:

Սուրբ Աւետարանի ընթերցումէն ետք, Ծիր. Աղաճանեան ողբերգունչ եւ նշանակալից քարոզով մը ողբերգեց յիշատակը անմահ նահատակներուն, խաղերէն լեզուով, զոր պիտի տանք ամբողջապէս, իր բնադրին մէջ ու հայերէն թարգմանութեամբ:

Սուրբ Պատարագը կը շարունակուէր հայկական ծէսին բոլոր վայելչութեամբը. մեղեդիներ մեղեդիներու վրայ կ'ուրուէին զոթական կամարներուն տակ Մայր Եկեղեցին: Գոթական կամարն իսկ հայկական արուեստի ծնունդ է: Գար, յարութիւն առնէր այդ հինաւուրց հայ ճարտարապետը, եւ տեսնէր մեր ծէսին ու աղօթքին փառաւորութիւնը արուեստի այս



Նահատակներու յիշատակը՝ Միլանի մայր տաճարին մէջ

ձեռակերտին մէջ, ուր ամէն ինչ արդէն աղօթք է խորհրդաւոր. բայց հայուն աղօթքը, հայուն կամարին ու խունկին հետ, զօթքը, հայուն կամարին ու խունկին՝ արքայ հայ նահատակին ողբերգունքով՝ արքայ հայ նահատակին ողբերգունքով: Եւ յուրեան վերածած էր այդ տաճարը: Եւ խորհիլ որ նոյն օրը, նոյն ժամուն, ուրիշ զոթական մեծ Մայր Եկեղեցիի մը մէջ զոթական մեծ Մայր Եկեղեցիի պատառ, Փարիզ, նոյնպէս հայկական պատառ կը մատուցուէր ողբերգունքով համար այս մեծ յիշատակը:

Բազմաթիւ հաւատացեալներ մօտեցան Ս. Հայրապետութեան խորհուրդին, մինչ Ս. Հայրապետութեան խորհուրդը զարգացաւ զարգացաւ կը խնկերգէին բազմազարտ խոստովանող Կոմիտաս Վարդապետի «Տէր ողորմեա», հայերով Ազգիս հայոց սէր, միութիւն ... անշեցեցեց արքայութիւն:

Յիշատակի մետաղները իրենց կուրծքերուն՝ զուրս կ'ելլէին եկեղեցիէն հայորդիները, նահատակներու գաւազանները, նոր զինները, նահատակներու գաւազանները, յիշատակի մը արշալոյսը ողջունելու, փառերգի փոխելով, և սուրբ, յաղթանակի:

Երեք օր ետք՝ խաղաղ հեռաւորի յորերուն տակ՝ ամբողջ Խաղաղ ալ, պահ մը, ըմբռնանց այս հոգեպարար արարողութիւնը:

«Հայ Տուն»ի մէջ

Միլանի եւ Խաղաղ հայութեան ողբերգութիւնը իր գաղափարներին հասաւ Հայ Տուն մէջ, երեկոյեան պատարագէն ետք: Հայութիւնը արդէն Տուումոյի հոգեպարար արարողութիւնը ճաշակած, ղինուորական Հայ Տուն: Քիչ ետք հասաւ նաեւ Գերշ. Զգօն Սրբազանի Վարդապետ: Գերշ. Զգօն Սրբազան Վարդապետը Միլանու Հայոց, արդէն իսկ Առաջնորդ Միլանու Հայոց, արդէն իսկ ղինուորական Գերշ. Յակոբ Ծ. Վ. Կիրակոսեան եւ Գերշ. Յովսէփ Գաֆթանեան Վարդապետ: Գերշ. Զգօն Սրբազան Վարդապետը Միլանու Հայոց, արդէն իսկ Առաջնորդ Միլանու Հայոց, արդէն իսկ ղինուորական Գերշ. Յակոբ Ծ. Վ. Կիրակոսեան եւ Գերշ. Յովսէփ Գաֆթանեան Վարդապետ: Գերշ. Զգօն Սրբազան Վարդապետը Միլանու Հայոց, արդէն իսկ Առաջնորդ Միլանու Հայոց, արդէն իսկ ղինուորական Գերշ. Յակոբ Ծ. Վ. Կիրակոսեան եւ Գերշ. Յովսէփ Գաֆթանեան Վարդապետ:

նի Արքեպիսկոպոս Ծիրանաւորը՝ Վսեմ. ձիովաննի Քոլոմպոյ: Սրահը ամբողջ լի էր ամէն կողմէ հասած Հայերով: Հոն էին Մուրադ-Ռափայէլեան վարժարանի աշակերտները՝ իրենց Տեսչական կազմով, Հոմի Գհնյալ. Լեւոնեան վարժարանի ժառանգաւորները:

Իտալերէն լեզուով ողջոյնի խօսք հիւսեց Բժ. Արամայիս Սրապեան, խանդավառ հայտրդիր տաք շունչով, որուն խոյն պատասխանեց Ծիր. Քոլոմպոյ:

Բանաստեղծ Ա. Սրապեանի ուղերձը

Eminentissimo Cardinale
Giovanni Colombo,

Per l'Armenità, specie per la Comunità Armena d'Italia, ha un profondo significato morale la presenza della Sua persona Eminentissima sotto il tetto della Casa Armena in Milano.

In questo giorno, 25 aprile, quando l'Italia tutta rievoca il ventennio della sua Resistenza eroica, noi, armeni, commemoriamo il cinquantenario del glorioso martirio del nostro popolo.

L'accomunarsi delle due ricorrenze storiche, affratella saldamente i due popoli nell'amore e nel culto della libertà, per cui ambedue lottarono e soffrirono contro le forze del male, nell'abbraccio della grande idea cristiana, per cui resistettero e vinsero.

Con questo sentimento che ci pervade tutti, la Comunità Armena d'Italia porge il suo reverente saluto alla Sua persona Eminentissima, augurandoLe ogni bene che Iddio onnipotente elargisce ai suoi figli prediletti.

Վսեմաշուք Ծիրանաւոր Տէր
Յովհաննէս Քոլոմպոյ

Հայութեան համար, եւ յատկապէս իտալիոյ Հայ Գաղութիւն համար, բարոյական խորունկ նշանակութիւն ունի Ձեր Վսեմաշուք Տէրութեան ներկայութիւնը Միլանի Հայ Տունի երգիքին տակ:

Այսօր, 25 Ապրիլ, մինչ բովանդակ ի-

տալիան կ'ողբկոչէ քսանամեակը իր հերոսական դիմադրութեան, մենք Հայերս կը տօնախմբենք յիսնամեակը մեր ժողովուրդի փառապանծ մարտիրոսութեան:

Պատմական երկու յուշատօներու զուգակցումը կ'եղբայրացնէ սերտօրէն երկու ժողովուրդները՝ ազատութեան սիրոյն ու պաշտամունքին մէջ, այն ազատութեան՝ որուն ի սպաս երկուքն ալ տառապալին պայքարեցան, ընդդէմ Հարին զօրութիւններուն, փարելով քրիստոնէական մեծ գաղափարականին, որուն համար գիմադրեցին ու յաղթեցին:

Այս զգացումներով համակուած, Իտալիոյ Հայ Գաղութը կը մատուցանէ իր յարգալից ողջոյնը Ձերդ Վսեմաշուք Տէրութեան, մաղթելով ամէն բարիք՝ զոր Ամենակարողն Աստուած գիտէ բաշխել իր ընտրեալ որդիներուն:

Ծիրանաւոր Քոլոմպոյ կը պատասխանէ

«Շնորհակալ եմ Ձեր աղնիւ հրաւերին համար: Ձեր արարողութիւնը, Տուոմոյի մէջ, Ձեր հաւաքոյթը այստեղ, ինծի խորհրդածել կու տայ թէ կայ ժողովուրդ մը՝ որ կը հաւատայ կեանքէն աւելի բարձր արժէքի մը: Մեծ դաս մը կու տաք դուք, որ կրած էք տեղահանութեան սարսափը, որ կրած էք ջարդի տմարդի սրհաւիրքները: Ձեր նահատակները իրենց մահով – եւ ի՞նչ մահ – հողի ղերբնական արժէքներու քարոզիչներն են: Ու մենք, Միլանցիներս, շնորհակալ ենք ձեզի:

Այս երեկոյ, Տուոմոյի արարողութեան ընթացքին, իմ պատուանդանիս բարձր դիրքէն՝ մեծ զոհունակութեամբ եւ յուսով հետեւեցայ ձեր պատարագին: Կրնամ վստահացնել որ Տուոմոն շատ քիչ անգամ այսքան ծովածաւալ բաղմութիւն կը հաւաքէ իր կամարներուն տակ: Ուրախակից եմ ձեզի, որ այսքան փառաշուք անցաւ ձեր հողերը հանդէսը:

Ու հիմա, ահաւասիկ Ձեր տան մէջ եմ: Գիւտ մը բրի այս իրիկուն: Ձէի գիտեր թէ այսքան մօտիկ Տուոմոյի Աստուածածնին, անոր հովանիին տակ, Տուն մը ունիք դուք: Սիրով եկած եմ հոս ու հպարտու-



Տեսարան մը «Հայ Տուն»ի հանդէսէն

թեամբ, նահատակներու եղբայրներուն ու թոռներուն մէջ: Կը հիանամ ձեր վրայ, որ հեռու եւ վտարուած ձեր բնիկ հայրենիքէն, հայրենիքը կը կրէք ձեր սրտերուն մէջ. այսպէս միացած իրարու, միշտ պամաստ՝ օղնելու իրարու: Այս իրիկունէ պարտա՝ օղնելու իրարու: Մի՛ (Ծափեր. Կեցցէ՛ մեր Կարգիւնալը): Մի՛ զգաք ինքզինքնիդ օտար՝ այս երկրին մէջ. ասիկա ձեր ալ հայրենիքն է:

Ուրախ եմ նաեւ որ հոս կայ Ձեր աղ-դին մէկ մեծ զաւակը, Ծիր. Աղաճանեան, որուն համբաւը ծանօթ է ամէնուրեք: Կ'աւելցնէր զնահատանքի մտերմական արտայայտութիւններ:

Հուսկ իր խօսքերը կ'աւարտէր ջերմ մաղթանքներով բոլոր հայութեան եւ յատկապէս Ծիր. Աղաճանեանի, համա-կրանքի սրտաղեկ խօսքերով:

Ստեփան Սրապեանի ձօնը

Իսկոյն խօսք կ'առնէր Ստեփան Սրապեան, Իտալահայ Միութեան Նախագահը. եղական մենաշնորհ կը նկատէր Մի-

լանի հայութեան համար՝ Ծիր. Աղաճանեանի ներկայութիւնը այս հանդէսին, որուն առնթեր՝ Ծիր. Քոլոմպոյ, իր այնքան հայասիրութեամբ մեր ողբերգութիւնը կ'անմահացնէր:

Ապա խօսքը ուղղելով Ծիր. Աղաճանեանի, զայն կը դուռատէր իբր մեր աղբի ընտրեալոյն զաւակներէն մէկը, որ Ախալցըխայէն եկած էր Կեսառներու եւ Առաքելներու մայրաքաղաքին մէջ՝ հայ աղբիւն հանճարը փայլեցնելու եւ ի սպաս դընելու համայն մարդկութեան, եթերներու մէջ բարձրացնելով մեր աղբին անունը: Արդարեւ, յարեց Տիար Սրապեան, Հայ Աղբին մեծագոյն յատկութիւնն է տալ, զոհուիլ, առնել զիտնալէ աւելի (Բուռն ծափեր):

Անապատներէն դարձանք մենք, շարունակեց, ու պայքարելով, յարատեւ աշխատանքով զիրքերու հասանք (կ'անհարկէր շուրջը ներկայ բաղմութիւն հայերու, մասնապէս Բժիշկներ, ճարտարագէտներ, անուանի առեւտրականներ, զբաղէտներ) եւ ահա հայութիւնը դարձեալ կու տայ:

ՄԻՀՐԴԱՏ ԹԻՐԵԱՔԵԱՆ

Արձագանգներ

Յաւարտ այս խանդավառ ճառերուն, Տիար Ստեփան Սրապեան, Նախագահ Իտալիոյ Հայոց Միութեան, Միլանի Հայ Տունի Պատուոյ անդամ հռչակեց երկու վսեմ. Ծիրանաւորները, Ծիր. Քոլոմպոյ եւ Ծիր. Աղաճանեան, Աստուծոյ ճամպելի եւ Գրպծ. Հմայեակ Վրդ. Կէտիկեան՝ Արբաճայր Ս. Ղազարուն:

Ներկաները խանդավառ ծափերով ողջունեցին նոր անդամները:

Հանդէսի փակման, մինչ բոլոր ներկաները կը հիւրասիրուէին ուրախ ժպիտներով, Ծիր. Քոլոմպոյ կը դերէր Ոսկեմատեանին մէջ:

Armeno di affetto, di preghiere, di elezione. Con benedizione di cuore.

Հայ՝ զգացումներով, աղօթքով եւ բնութեամբ: Սրտագին օրհնութեամբ:



Սղատօնը վերածուած էր փառատօնի, մինչ ուրախ ու խանդավառ մթնոլորտի մէջ բոլոր ներկաները կը փափաքէին մօտենալ երկու Ծիր. Հիւրերուն, որոնք սիրազեղ ու հայրական խօսքեր ունէին բոլորին եւ քաջալերէին մտածութիւններ կը հաղորդէին, լուսանկարիչներու փայլակներուն տակ:

Սանդալառ յոյսեր, վաղուան արշալոյսին բացուող չքնաղ ծաղիկներ, որոնք խոստումներն են հայ ազգին յաւերժութեան, արտասահմանի մէջ՝ ձուլումի դէմ եռացող պայքարին, կը բողբոջեն բոլորին կուրծքերուն տակ:

Ծափերով մեկնեցան բարձրաստիճան հիւրերը. մինչ Հայերը կարծես չէին ուզեր հեռանալ Հայ Տունէն, ուր անցուցած էին իրենց երջանկալոյս օրերէն մէկը:

Հ. Ն. Տ. Ն.

ՅԻՍՆԱՄԵԱԿԸ ՄԻԼԱՆՈՅԻ ՄԷՋ

Յատկապէս զօրացնելու եմք հոգիին գէնքերը¹:

ԿԱՐԴ. ԳՐ. Պ. ԱՂԱՃԱՆԵԱՆ

Այսօր բացառիկ մեծութեամբ մեծ է հայութիւնը, Զի մէկ է իր կամքին մէջ եւ որոշողութեան, Զորսուկէս միլիոն հայեր, Հայաստանէն Արտասահման, Կ'ոգեկոչեն մէկուկէս միլիոն նահատակուած հայութիւն. Սրահներու եւ եկեղեցիներու մէջ, Մեծ է յուզումը, մեծ՝ խօսքը, գերադրական՝ բազմութիւնը, Զի ամէն մէկ հայու սրտին մէջ, Ներկայ է մէկուկէս միլիոն նահատակուած հայութիւն... Ներկայ է մէկուկէս միլիոն նահատակներու դեմքը նոյնպէս, Հոս են սուրբերը, անապատներու դեմքը, Մտրակներու մոլեգնի՛լը հոգմոտ աւագութիւն մէջ, — Այսօր բացառիկ մեծութեամբ մեծ է հայութիւնը:

Դափնեգարդեալ սրահներու մէջ, Աստուծոյ խորանին առջեւ, Կանգնած են եկեղեցւոյ Պետերը, իրենց շքեղանքին մէջ, Կանգնած՝ հայութիւնն ամբողջ կողմ կողմի, Ու այս միութիւնը սէրն է, արիւնին ձայնը, կամեցողութիւնը, Որով տկարը կ'ըլլայ հզօր, հզօրը՝ անբեկանելի, Որով երկինքները կը լեցուին աստղերով, Ու անդունդները կը լինեն իրենց խաւարը, — Գերյուզեալ բազմութեան վերեւ, քաղցր շնչելէն, Կը լսուի Ամենակալին ձայնը, — Որով Միսիքարիշը կը սփոփէ վշտահարը, — Այսօր բացառիկ մեծութեամբ մեծ է հայութիւնը:

Ամէն սրտի առջեւ բաց են յոյսին համբանները, Հաւատքին սիւները վե՛ր կը բռնեն Միութեան Շէնքը, Այդ Շէնքը յաւիտ մնայ ամուր, անխախտելի, Որու մէջ ապրին Սէրն ու Եղբայրութիւնը, Որու պարտեզներուն մէջ, կամարներուն տակ, Գան ոստոստել մեր գաւակները, Ամէն հայ մէկ հայ, ամէն վնիւ մէկ վնիւ, Զի մեռելները մէկ եղան, անապատները նոյնպէս, Ու Ապրիլեան եղեռնը վերածուի Ապրիլեան Արշալոյսի մը, Որու արեգակը չհանչնայ երբեք մայրամուտին մահը, Որպէսզի բացառիկ մեծութեամբ մեծ մնայ հայութիւնը:

ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ

1) Հայկական Տան մէջ արտասանած իր խօսքէն: